

2501



HAI ARI



ՀԱՅ ԱՐԻ

ՕՐԿԱՆ ԳՐԱՆԱԽՅԻ ՀԱՅ ԱԿԱՌՏՆԵՐՈՒ
ORGANE DES SCOUTS ARMÉNIENS EN FRANCE

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ
 I. ANNÉE No.

1

!

1929

!

ՀՈԿՏԵՄԲԵՐ
OCTOBRE

1410

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ՊԵՏԻՆ ԽՕՍՒԲԸ Գ. Մեծասուրեան
- ՄԵՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ «Հայ Արի»
- ՍԿՆՈՒՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ
- ՀԱՅ ԱՐԻՆԵՐԸ Hubert Martin
- ԴԷՊԻ ՃԷՄՊՕՐԻ Գաղղղեհեհ Մեկր
- ՀԱՅ ԱՐԻՆԵՐԸ ՃԷՄՊՕՐԻՆ ՄԷՋ Հ. Դեմալկան
- ՊԵՏԻՆ ԿԵԱՆՒԲԸ Խնթազուրուհի

Միութեան կեանք
 Հայ Մեղեմեան

Գինն է 2.50 Ժրան

HAÏ ARI

REVUE MENSUELLE

ORGANE DE L'ASSOCIATION DES SCOUTS ARMÉNIENS

RECONNUE PAR LE BUREAU INTERNATIONAL DE SCOUTISME

Directeur Kourkène Medzadourian



ՀԱՅ ԱՐԻ

ՕՐԿԱՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ
Կը հրատարակուի ամիսը մէկ անգամ խնբագրական մարմնի մը կողմէ

Յօդուած և դրամական առաքումներ ընել հետեւեալ հասցէին՝

ԿՈՒՐԿԷՆ ՄԵԾԱԶՈՒՐԻԱՆ

3 Rué Gustave Tricard


BAGNEUX (SEINE) FRANCE

Բաժանուղագրութեան պայմաններ

Ճրանգ, Սուրժա եւ Պալֆաններ Տարեկան 25 ֆրանկ

Ուրիշ երկիրներ « 3 ֆրանկ

Խաօր մեռք կը ծախուի 2,50 ֆրանկ



Ս. Տարի	1
Ի Լ	ՀԱՄԱԳԻՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ Հոկտեմբեր
1	1929

ԳԵՏԻՆ ԽՕՍՔԸ

« Հ Ա Յ . Ա Ր Ի » Ն

Վաստի եւ նր մեր բոլոր սկսումները մտախորթեամբ է նր պիտի ողջունեն «Հայ Արի»-ին հրատարակուելը: Ան սերս կապ մը պիտի ստեղծէ Թրակիայի մեջ գրուած մեր սկսումներուն միջև եւ պիտի ծանօթացնէ մեր շարժումը հայ գաղութին: Այս անսպասելի մեր բոլորիդ է սիրելի տղաքս, աշխատակցեցե՛ք անո՛ր, բարեկամներ գտե՛ք որ քաջադերեկ զայն, որպիսիք բարգաւաճի եւ կատարէ իր դերը մեր անկեղծ «Հայ Արի»-ն:

Այս հարցին պատասխանելու համար ես շատ քիչ ոչ եմ մտնում, եւ ինչ է արժեքը մեր սերունդին: Մեզիկ շատերը կը պատկանին «Մեծ Եղեռն»-ի սերունդին. ծնունդ անպատեհուն մարդուն վրայ, որիցներ հազիւ անգոր մանուկներ, իրենց մայրերուն շնորհիւ փրկուեցան մեծ արհաւիրքի: Բախտաւորներ շատ քիչ եղան եւ անոնց աչ սակցակցը կուտայ չիր:


ՄԵՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Առայցիկ առիթով կ'արժէ պարզել քիչ ինչ պիտի զղայ մեր ուղին: Միտքիւն մը անս ուուն անդամներուն քիչը օր ղոս օրէ կը շատայ. Ինչ դեր պիտի կատարեն մեկ հայ ազգային կեանքին մեջ:

Ահա առայցիկ շիշատակը մեր մասայ մեկին. անխոսիեմ զայն մեկ բառով. — սուրբալի: Յետոյ կեանք արեւի շատ օրեր: Զինուորապետ եւ խանդավառութիւն: Հայաստանի Հանրապետութիւն, անգաղթ, «անուսակ մեր զարեղ», «կեցցե՛ք հայ բանակը»... եւ 1920-ին անս անգամ մը եւս պիտի եր ձգել արեւի բուն եւ արքա:

339

300-2001



207-39ach

սակիչ եւրոպայ, եւ ի զին ինչ թշուա-
նութիւններու: Այս է պատմութիւնը մեր
բողոքիս:

Յետոյ եկաւ ինքնակոտորանի շրջանը:
Յրանաւսական դպրոցը կամ աշխատանոցը
նոր հորիզոններ բացին մեր առջեւ,
սկսաւ մոռնալ արդէն շա՛ս աղօս անցեալը,
եւ որ ըստ օրե աւելի բողոքաւոր կը
զգաւ ինքզինցիս: Բայ չէ՞ն զար վայր-
կեանքներ ուր դո՛ւք կը մտածե՛ք՝ «բայց
ի՞նչ բանի կը պատահուի ինք մեզ, պիտի
դառնանք միայնակներ, թէ պիտի
մնանք միմեկեւ վերջ հոս իր հայ օսա-
րակներ, մասնակցելով քանի մը հայ
հանդիսներու, հազիւ կուտելով հայե-
րեան, եւ յետոյ...» Հայ սկստաւորներ
միայն կուտայ մեր ուզած պատասխանը:

Նախ զիցե՛ք՝ սիրելի սկստներու ու
դո՛ւք իրաւունք չունիք՝ մտածելու ուրիշ
բանի մասին: Չե՛ր անեմանք բողոքակի
«Հայաստանի ե»: Սեր սերունդը կը մեծ-
նայ օտար հողի վրայ բայց ան պիտի է
իր հայ զարգանայ: Մե՛ք քրտնակալ
բողոք շրջանակներուն մեջ, զարգացուցէք
մեր միտքը, սորվեցե՛ք ինչ որ օգտակար է,
եւ թող հեռու չըլլայ մեզից այն մտածուքը
որ այս բողոքը «Հայաստանի համար է»:
Այն պատանիներ որ երկար կը սաշե քրտն-
ակալ աշխատանոցին մեջ թող չմոռնայ
թէ հայ մարտարուեստին համար կը
պատահուի:

Իսկ մեր ոյժն այնքան արհամարհելի
չէ. իր կրթութեամբ եւ կարգապահ խելակ-
ցութեամբ, մեր սերունդը կրնայ շատ մեծ
պատասխանութիւններու զոյժի անցնիլ
վայրը՝ հայրենիքի մեջ. կը բաւէ որ շա-
րունակի աշխատիչ յետոյ ու կարգապահ
կերպով: Ինքնակոտորանի եւ պատահա-
նութեան շրջանէ ե հիմա. պիտի է ըլլայ
միւր եւ ըստեսու:

Անտարքեր գնահատուի եւ քննադա-
նութեան դո՛ւք մեր գործը պիտի շարունակե՛ք:
Յառեցե՛ք մեր աջները միշտ դիպի
Մասիս, բարձրացուցե՛ք մեր արեւը եւ
զարգացուցե՛ք մեր միտքը: Հայրենիքը շատ

բան կ'սպասէ մեզի, դո՛ւք մեծն Տիգ-
րանի եւ Բագն վարդանի անկորնելի
սերունդ:

ՃԷՄՊՕՐԻ

Ահա բողոքի վերադարձանք ձեռնադր-
իկն: Աւերոյց սասնելիկն օր մեկ սպ-
րեցանք սկստներու նորոշակին սակ,
իր միտքնայն հայրենիքին զարակները:

Մեր Միտքեան դրկած երեսունեւ-
ջորս սկստները մեծ սիգե: Բաւեցին
եւ անոնց ջանքերը յաջողութեամբ պը-
տակուեցան: Հայ սկստները սիրտեցան
բողոքի: Մեր բանակաւորը անեմանք
դեղիկներէն էր, եւ միշտ մտաւ: Մեր
սկստները միւր էին, քաղաքակար եւ
աշխատանք:



Եւ հիմա, մեր աննախընթաց յաղ-
բանակէն վերջ շատ բան կը սպասուի
մեզից սիգե: Դո՛ւք մեր Բարբի մեջ
սեռաւ սկստներու խելակալ նշանա-
կութիւնը: Ես վստահ եմ որ հիմա կը
փախազի մեր ետանդով շարունակել
մեր սկսած գործը: Հաւատացե՛ք մեր ա-
պագային եւ մնացե՛ք «Միշտ Պատաս»:
Իսկ երբ կուզան վիստութեան վայր-
կեանքներ եւ կը զգաւ թէ կը սկստանաւ,
յիշեցե՛ք այն իօսքը որ մեզ ըսաւ Սկստ
Պետր Լորս Պէյքըն Բառը:
«Հայ Արիներ, մեծ վստահութիւն
ունիմ մեր վրայ...»:

ՆՈՐ ՕՐԷՆՅՆԵՐ

Անեկ բան որ հանոյնով կը կա-
սարուի աշխատանք չէ...
Ոչինչ անոնքան ըստ կը յաջողի ու-
րան յաջողութիւն (Անպ. առածներ):
ԳՈՒՐԳԷՆ ՄԵՆԱՏՈՐԵԱՆ

ՄԵՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Յրանալի հայ սկստներու միտ-
քեան կազմութեան առթիւ, շատ մը բարե-
կամներ կը փախազին գիտնալ թէ ինչն
պէտք տեսնուի անջատ սկստական շար-
ժում մը կազմակերպելու, բաժնուելով Հ.
Մ. Բ. Մ-էն, թէ այս բաժանումը ուժերու
ցրում է, եւ այլն:

Զգուշացանք Հայ մամուլով պատաս-
խանել այս հարցերուն, նկատելով որ մեր
մէջ պարզ բացատրութիւն մը յաճախ մա-
մուլի կուր կը փոխուի: Մեր օրկանը առիթ
կ'ընծայէ տարու անհրաժեշտ լուսաբանու-
թիւնները:

Զանաք պարզել մեր գործը առանց
ճանրանալու Հ. Մ. Բ. Մ-ի ղեկավարներու
անցեալ սխալներուն վրայ:

Ի՞նչ է սկստական շարժումը:

Այսօր, բազմաթիւ մանկավարժներ,
սկստական լուսագոյն միջոցը կը հա-
մարեն պատանիին նկարագիրը կազմելու եւ
զայն կեանքի պայքարին պատրաստելու
համար: Եթէ սկստական ղեկ լեցնել
զարգացնել պակասը, գեթ անոր անհրա-
ժեշտ շրջանցիկն է: Ան ուրոյն շարժում
մըն է ամբողջապէս նուիրուած պատանիի
մտաւորական, ֆիզիքական եւ հոգեկան
զարգացման: Ունենալով տարբեր յայտագիր,
ան չի կրնար կապուիլ ուրիշ շարժումներու,
ինչպէս՝ մարմնակրթականի հետ: Աշխարհի
բոլոր սկստական միութիւնները միայն
սկստական յայտագիր ունին: Միայն հա-
յերը 1918ին ճիմեցին միութիւն մը, որ
միաժամանակ թէ մարմնակրթական էր եւ
թէ սկստական, ինչ որ ոչ տրամաբանա-
կան էր եւ ոչ ալ գործնական: Յիշե՛ք որ
Հ. Մ. Բ. Մ-ը չէ ստեղծած հայ սկստական
շարժումը: Պատերազմէն առաջ Պոլսոյ
երկու հայ դպրոցներու մէջ «հայ սկստ-
ներ» անունով խումբեր գոյութիւն ունէին,
եւ կատարեցին կարեւոր դեր մը:

Զինադպարի օրերուն կազմուեցաւ Հ.
Մ. Բ. Մ-ը որուն կ'անդամակցէին 12 տարե-
կան մանուկը եւ 40նոց անտաշ «Փութա-
լիսթը» եւ ոչ միութեան կանոնադրու-
թեան համաձայն 12 եւ 40 տարեկան ան-

դամները եղբայրներ էին եւ պիտի դաստի-
արակուէին միեւնոյն ձեւով: 40նոցը պիտի
բարեփոխուէր, իսկ 12նոց անդամը պիտի
մեծնար, լաւ ֆութպոլիսթ եւ լաւ հայ
ըլլալ պիտի ջանար...:

Շատ դիւրու նկատելի է այս յայտա-
գիրն անգործնական ըլլալը: Սկստական
նը տղան կը պատրաստէ իբր ավագայ
մարդ. իսկ «աթլէթ» ու «ֆութպոլիսթ»ը
որոնք միեւնոյն միութեան մէջ էին, միայն
իրենց միտքները կը մարդէին: Եւ արդէն
փորձը հաստատեց ասիկա. Եթէ 1921ին
Պոլսոյ հայ սկստական ղեկները կանոնադրուե-
ցաւ. այդ եղաւ շնորհիւ կարգ մը սկստ
մասնագէտներու, որոնք մեկուսացուցին
սկստական ղեկները մարմնակրթականէն:

Իսկ երբ ցրուեցաւ Պոլսոյ, Հ. Մ. Բ. Մ-ը
օրէ օր կորանցուց իր կենսականութիւնը,
վէճ ու կուր ծայր տուին, վարչութիւններ
յաջորդեցին իրարու (նոյնը թէ Բարիդի,
թէ Պուրթէշի եւ թէ Սոֆիայի համար):
Ոմանք զբաղեցան «սփօռով», ուրիշներ
հին կուրներ մէջտեղ հանեցին, եւ սկստ-
ական ղեկներ մէջտեղ մնաց: Պէտք չկայ այս
կէտին վրայ ճանրանալ. յիշողութիւն ունե-
ցողը կրնայ մտաբերել վերջին չորս տարե-
ներու պատմութիւնը:

Սկստական փոխանակ վնասուելու այս
լըումէն, ընդհակառակը օգտուեցաւ, որով-
հետեւ սորվեցաւ իր ուժին վստահիլ եւ չը
յուսահատուիլ. այսպէս հաստատուեց
թեան անկախ կազմակերպութիւն մը ըլլա-
լու անհրաժեշտութեան գաղափարը:

Սխալ է մտածել թէ Հ. Մ. Բ. Մ-ը
ազգային հանգամանք ունէր, եւ ուժերու
ջլատում է «անկէ բաժնուելը»: Շատ սխալ
հիմ մը կրուած էր եւ անհրաժեշտ էր որ
այս երկու շարժումները բաժնուին աւելի
զարգանալու եւ յառաջդիմելու համար: Աշ-
խարհի վրայ աւելի բան երկու միլիոն
սկստներ կան եւ միայն հայերն էին որ
զայն խառնած էին մարմնակրթականին:
Անկարելի էր այս պատանիները սկստներ
նկատել ինչպէս միմեկը: «Սկստական
շարժումը ոչ մասնակրթական մի-
ութիւն է եւ ոչ ալ «մարմնակրթական»
Այսպէս կը գրէր Հ. Մ. Բ. Մ-ին՝ սկստ-
ական միջազգային գրասենեակին տի-

բէնը իր մայրս 9 թուակիր մերժողականով

Մեր միութիւնը որ ճանչցուեցաւ սկա-
ուասկան միջազգային գրասենեակէն, և
այսօր կը վայելէ անոր պաշտպանութիւնը,
շատ մը յարձակումներու ենթարկուեցաւ
կարգ մը անձերու կողմէ, որոնք կը պըն-
դէին թէ. «ճանչցուելով միջազգային գրա-
սենեակէն, այս օրացը հայութիւնը ձգե-
ցին և եղան անգլիացի»: Մինչդեռ իրա-
կանին մէջ ճանչցուելու համար միջազգա-
յին գրասենեակէն, պէտք էր նախ հայ
նախկին փառաբանի շրջալ էր ընդունի
հայկական եռագոյնը: Եւ արդէն այն Հ.Մ.
Ը.Մ.-ականները որոնք այս առարկութիւն-
նը կ'ընէին մեզ դէմ, իրենք ալ կը ջանա-
ցին... ճանչցուել միջազգային գրասենեա-
կէն (ապրիլ 24). այս առաջարկին պա-
տասխանը բիւ մը վերը յիշեցինք արդէն:

Հայ սկաուտական անճատ և անկախ
միութեան մը կազմութիւնը կատարուած
իրողութիւն մըն է այլևս:

Այն հայրենակիցները որ կը սիրեն
սկաուտութիւնը, պէտք է տարուին զա-
նազան անըմբռնելի գաղափարներէ, այլ
գուրգուրան այս միութեան վրայ: Գործը
արդիւնքէն պէտք է դատել և ոչ թէ վը-
ճիւ մը արձակել ժամանակէն շատ առաջ
և այն ալ «ընդօրինակելով» մեր հակառա-
կորդները: Մենք առկնք այս բայը աչի
առջև ունենալով մեր ազգային Իտէալը և
մինչև վերջը պիտի շարունակենք աշխա-
տիլ այս հայ գաղափարին համար: Մենք
չենք ճանչնար թշնամիներ կամ հակառա-
կորդներ և կը մնանք բարեկամ ամենուն
համերաշխութիւնը անհրաժեշտ է ամէն
այն միութեանց, որոնք կը ձգտին ուժերու
ամփոփման: Փրանսայի հայ սկաուտներու
միութիւնը աշխատանք մը առած է իր
վրայ և ամէն գնով պիտի ջանայ զայն
կատարելու ամբողջովին, հակառակ ամէն
անհասկացողութեանց և հակառակութեանց:
Յաջողութիւնը ճշմարտութեան կը պատկա-
նի և ապագան ցոյց կուտայ թէ որն էր
ճշմարիտը:

ՀԱՅ ԱՐԻ

Ս Կ Ա Ո Ւ Տ Ա Կ Ա Ն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ձէմպօրիի ընթացքին Արրօի զգեակին
մէջ տեղի ունեցաւ Սկաուտական Միջազ-
գային Համաժողովը, մասնակցութեամբ 44
ազգերու սկաուտ ներկայացուցիչներուն:
Հայ սկաուտներու Միութիւնը զրկած էր
չորս պատուիրակներ, նախագահութեամբ
ընդհանուր պետ՝ Գուրգէն Մեծատուրեանի՝
խակ անդամներն էին. Պարոյր Պաշեան-փոխ
նախագահ, Հրանդ Գերձակեան, Արմիկ
Ջամուկեան և Յակոբ Գաւուքճեան:

Պէյտըն Բատըլ բացաւ համաժողովը
և բարի գալուտի խօսքերէ յետոյ, շեշ-
տեց այն կարևոր դերը որ պիտի կատարէ
այն համաժողովը: Միջազգային Գրասեն-
եակի անօրէն Hubert Martin Esq.
C.B.E. կարգօց իր տարեկան անդակազ-
րը. ժողովը զբաղեցաւ սկաուտական մի-
ջազգային խնդիրներով և արուեստան կարե-
ւոր որոշումներ, որոնք մեծապէս պիտի
նպաստեն սկաուտական շարժումին զար-
գացման:

Յառաջիկայ երկու տարիներուն հա-
մար ընտրուեցաւ հետեւեալ միջազգային
կոմիտէն. բաղկացած հետեւեալ սկաուտ
անձնատարութիւններէ.

Մածօն Պօնշթէթէն, Հայր Ժագօպս,
մածօն Լիպըրաթ. կոմս Հանրի Մարթի,
սրբ Բիբֆօրտ, պ. Փրանք Բրէտլըրի, պ.
Մօրթիմըր Շիֆ, Տօքթ. Լ. Պ. Սվօժը և
կոմս Թէլէբի:

* *

Մեծն Բրիտանիոյ Լաուալարութիւնը
Լիպըրաթի Ատէլֆի հօթէլի մէջ ծառ մը օր-
ուա ի պատիւ օտար պատուիրակներուն,
օգոստոս 12-ին, որուն հրաւիրուած էին
և մասնակցեցան նաև հայ պատուիրակները:

* *

Օգոստոս 6ին տեղի ունեցաւ միջազ-
գային ժողով մը, խորհրդակցելու համար
խալ, համր եւ հաշմանդամ սկաուտներու
մասին: Այս ժողովին մասնակցեցան նաև
հայ պատուիրակներ, որոնցմէ Արմիկ Ջա-
մալեանը խօսք առաւ ժողովի ընթացքին:

ՀԻՈՒՊԸՐԹ ՄԱՐԹԻՆ ԵՒ ՖՐԱՆՄԱՅԻ ՀԱՅ ԱՐԻՆԵՐԸ

Միջազգային Գրասենեակի սօրէն Հիւպըրթ Մարթին հետեւեալ զնդեցիկ յօդուածը
դիտած է «Հայ Ա. ր. ր.» սուտային թիւին համար, որը հաճոյքով կը հրատարակենք:

«Ի՞նչ չունիք յիշեցնելու մեր ընթացողներուն թէ ինք անկեղծ բարեկարգ մըն է մեր
Միութեան և մեծ ծառայութիւններ մատուցած է մեզ:

ՌԻՍԿՈՒԹԻՆ

«Ես վստահ եմ
որ Միջազգային կո-
միտէն մեծ հաճոյքով
ընդունեց ֆրանսայի
Հայ Սկաուտները
ճանչնալ իբր սկա-
ուտական կազմա-
կերպութիւն մը: Բո-
լոր սրտովս կը շնոր-
հաւորեմ լմ հայ
սկաուտ եղբայրներս
այս վստահութեան
ապացոյցին համար
որ ցոյց տրուեցաւ
իրենց հանդէպ: Ան-
կեղծօրէն մեծ յաջո-
ղութիւններ կը ցան-
կամ իրենց, սկաու-
տական կեանքին մէջ:
Ինձի համար մեծ
հաճոյք մըն էր հան-
դիպիլ ձէմպօրիի ի-
րենց պատուիրակու-
թեան, ուր լմ բարե-
կամութիւնս աւելի
սերտացօցի անոնց
հետ:



HUBERT MARTIN Esq. C. B. E.


Սկաուտական
շարժումը համաշ-
խարհային մեծ եղբայրութիւն մը
եղած է հիմա, որ կը միացնէ բոլոր
սկաուտները բարեկամութեան և
իրերհասկացողութեան կապերով:
Յիշեցէք որ սկաուտութիւնը
երջանիկ խաղ մըն է, որ եթէ խա-

ղացուի իր հիմնադրին Լորտ Պէյտըն
Բատըլի դրած շրջաններուն համա-
ձայն, ձեզ պիտի օգնէ՝ աւելի լաւ
խաղալու կեանքի մեծ խաղը:»

ՀԻՈՒՊԸՐԹ ՄԱՐԹԻՆ

ՀԱՅ ԱՐԻՆԵՐԸ ԴԵՊԻ ՃԵՄՊՈՐԻ


(Ճանապարհային սպանություններ)



Եսթաբ, Յուլիս 28. — Հիւսիսային կայարանը գրաւուած է սկաւտներու կողմէ: Ամէն կողմ՝ բազմութիւն, հաւաքման սուղիչներ, ծրարներ և սկաւտներ: Պաշտօնեաները և անձանօթ ժողովուրդը ապշած են...:

Ահա հայ սկաւտները կը հաւաքուին, շրջապատուած իրենց ճնարներէն և բարեկամներէն: Ամէն ոք կ'աճապարէ:

— Պարոն խմբապետ, իմ տղաս բիւ մը հարբուխ է, լաւ հոգ տար, կ'ըսէ սիրաւիւր մայր մը:



— Անգլիոյ օլը խոնաւ է ուշադրութիւն...:

— Համեմատուող անմիջապէս նամակ գրեցէք...:

* * *

Նոր արարողութիւն մը. պէտք է լուսանկարուիլ:

— Ժպտեցէք տղաք, ճէմպօրիի կը մեկնինք...:

«Մեր հայրենիք բշտառ անհր...»

Ծեր սկաւտը հրաժեշտի խօսքեր կ'ընէ:

* * *

Հայ սպաշակոյցը տենդոս կ'աշխատի իր բաժանումին մէջ. հրահանգներ կը զրկուին բոլոր խմբակներուն:

Ճաշ շքեկաւքին մէջ: Վարանսի խմբապետը իր ծրր պաղ ճաշն է որ կ'ընէ և աակաւին 6 հատ ալ ունի մինչև ճէմպօրիին բացումը:

Ժամը 3: Տէօնքէրը կը հասնինք: Բոլորս ալ բեռնաւորուած ենք Կապանիլ:



Ճառերու նման. պէտք է բալել 3 քիլօմեթր փոշիին մէջ և արեւին տակ...:

Բիւ մըն ալ տղաք, ճէմպօրիի պիտի մասնակցիլք:

Վերջապէս զինաւորական դաշտը կը հասնինք:

Բանակումի հաստատում Պրանտայինները կը շրջապան չորս կողմ:

Հայ թերթից յանձնախումբը տղոց նշանակ և գօտի կը բաժնէ: Բնդհանուր պետը իր աշխատակիցներով յայտագիրը կը պարաստէ:

Բանակաւայրը մօտ է Մալօ-լէ-Պէնի ծովեզերքին, այցելութիւն և ջահագնացութիւն: հաղիւ կէս գիշերին կարելի կ'ըլլայ պառկիլ:

* * *

Կիրակի 29 Յուլիս... Զարթնում Արեւին հետ... Ճամբորդութեան աշխատանքները:

* * *

աանքներ, փորձեր, հրահանգներ և դարձեալ հրահանգներ...:

Ընդունելութիւնը քաղաքապետարանը. տղանցքը քաղաքին փողոցներուն մէջ: Պրանտական թերթերը կը խօսին մեր և յոյներու մասին:

Օրը կը լրանայ: Մեկնելու պատրաստութիւն: Ժամը 8ին կը մեկնինք դէպի Tisbury: Գոյքերը մեկնած են օրդէն, սրոշուած յանձնախումբը իր գործը կատարած է հրաշալի կերպով:

«Picard» շոգենաւը լեցուած է ծինեղջիւղէն մինչև անխարանները. սկաւտներ, ամէն կողմ, անմեք սոքի կը բնաման, ուրիշներ նստած... Հայ արիները հրաշալի կերպով տեղաւորուած են... Ամէն սրտիկ սկաւտ մէկ առաջին կարգի խոյիկ անի. մեծերը կամրջակին վրայ են:

Հայ սպաշակոյցին բեռները հանդիսան են խոյիկին մէջ, խոյ անդամները... տղաքը կը տեղաւորեն...:

Ժամը 11. շոգենաւը կը շարժի...:

Բնդհանուր պետը հրաման կ'առնէ 4 ժամ բնամարտ...:

Երկուշաբթի ժամը 5... Ճամբորդութիւնը հրաշալի է. ծովը խաղաղ, սկաւտները գոհ...:

Շոգենաւը կը բարձրանայ Թայմըլ գետը, դէպի Թիլլըրի...:

Ժամը 6ին կը հասնինք...:

Ահա Հիւսթըրթ Մարթինի բարտուղարը որ կը զինուորէ մեզ:

— Հրաման ստացած եմ հայ արիներուն ապահովելու հանդիստ ճամբորդութիւն մը, կ'ըսէ սիրելի բարտուղարը:

* * *

Տեղաւորուած ենք առաջին կարգի խոյիկներու մէջ, դարձեալ աշխատանք... Ապրիլի 29, 1929, London, Crewe, Stafford...:

Ժողովուրդը կը ծափահարէ սկաւտները ժամը 3ն է. հասանք ահա:

BIRKENHEAD!

* * *

Կայարանը դրօշազարդուած է, հալաբաւոր ժողովուրդ. կեցցեն սկաւտները:

— Armenian Scouts...
— Aren't they smart?...
— Hourrah!!!

Մասնաւոր կառքեր...
Յառաջ տղաք դէպի Arrow Park:
* * *

Վերջապէս...
Բարբէն ներս կը մտնենք...
Ռօվըրներ կը հսկեն...:

Գէպի Bureau International, միայն «Գուրգէնական» սկաւտները կրնան մասնակցիլ իրր հայ...:

* * *

Առաջին հանգիստըն է Պիլարն Բաուլը:

«Բարև հայեր. ինչպէս էք»:
Եւ մեր տղաքը ուժիկին կը սեղմեն սեւտին ձեռքը:

* * *

Օլը վատ է, բաւական ցեխ կայ:
— Գէպի Հայաստան բանակաւայրը:
— Հայերուն համար, հուռուհ:

* * *

Բանակաւայրնիս հրաշալի տեղ է. կեդրոն և լաւ զիրք...:

Ահա մեր բանակումի պետը, գնդապետ Հէլլը:

— Օ'ն տղաք, շինենք մեր երկիրը:
Երդէն Լոնտոնի թերթերուն թղթակիցները ներս կը խոսեն:

— Հայաստան. մայրաքաղաքը... Փարիլ...:


Երեկոյ է:
Աշխատանքները կը շարունակուին:
Խմբապետ Պաշեանը եւ Վարանսի միւս տղաքը կ'ընեն իրենց տաներկուերորդ պաղ ճաշը...:

— Հասանք տղաք:
Ամենիդ գոհ բնացէք այս գիշեր, այս բոլորը ձեր ճիւղերուն արդիւնքն է. վաղն առաւօտ կը սկսի պայքարը: Գացէք ուժեր հաւաքեցէք:

— Յովիկ դէպի աշխատանք. բաւական գործ ունինք այս գիշեր...:

* * *

Գացողներէն Մեկը



ՀԱՅ ՍՎԱՌՆՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԵՄՊՈՐԻՒՆ ՄԷՋ

Վայրաշարժը սուրբ... Բանի մը երկվայրկեաններէ վերջ հսկայ կայարան մը մտանք: Սև պատերուն վրայ շուտով նըշմարեցինք. «Woodside Station»: Հասած էինք հոն, ուր երթալու համար ամիսներով աշխատած էինք: Խանդավառութիւնը մեծ էր. կառավարներն պատուհաններէն կախուած սկառսները ուրախութեան ձայներ կ'արձակէին, վայրկեան մը անդէլի դարձնելով կայարանին ժխորը. անմիջապէս յետոյ 500 սկառսներու բազմութիւն մը կը լեցնէր կայարանը: Ամիսիտուած կը սպասէինք մեր կարգին դուրս ելնելու համար. յանկարծ այդ ընդհանուր ժխորին և իրաբանցման մէջէն ձայն մը լսեցինք, որ մեզի կը մօտենար Armenia, Armenia գոչելով: Մեզ յատկացուած առաջնորդն էր: Հետեւեցանք անոր: Փողոցները լեցուն էին ժողովուրդով. կայարանին առաջ նեղ անցք մը ձգուած էր մինչեւ հանրակառքերը, որոնք մեզ Arrow Park պիտի փոխադրէին: Թեւե՛րնուս վրայ գրուած «Հայ Մխառն» մակագրութիւնը ընդհանուր ուշադրութեան առարկայ էր: Ծամբայ ելանք: Պատուհանները լեցուն էին, ամէն ոք կանգ առած ժպտալի գէմքերով թաշկինակներ կը շարժէր. փոքր տղաք բանի մը վայրկեան կառքին ետեւէն կը վազէին, բաց չկարե-

նարով հասնիլ կանգ կ'առնէին և կը դո՛հա նային գլխարկին օրը նետելով և ուրախութեան ձիւներ արձակելով: Իրապէս, այնքան ջերմ էր ընդունելութիւնը. որ մենք մուցանք ծամբուն ամբողջ յոգնութիւնները: Այսպէս ուրախ դուարթ վար իջանք Արթ-Բարթ-ին առջեւ: Ոսկեգոյն նիզակներով դարգարուած դուռնէն ներս մտանք: Հաղիւ երկու հարկը մէկը յառաջացած էինք ծառազարդ ծամբայէն, երբ ձայն մը ամբողջ խումբը կեցուց: Պէշարն Բաւըրն էր որ «Արմինիա» կոչելով գէպի հայ ընդհ. պետը կ'առաջանար ժպտալին: Բարի գալուստ մագլթելով ան յայտնեց իր ուրախութիւնը, հայ խումբը ընդհ. ձեմպօրիին ներկայ տեսնելուն համար:

Մեծ Պետին ողջունէն վերջ անտու մը կտրեցինք, անցանք դաշտավայրէ մը և մտանք ընդհանուր բանակետողը, ուր մեզի յատկացուած էր չուաններով ջրջարտուած բառակուսի տարածութիւն մը: Բանակետողի անկիւններէն մէկը սահմանաւորուած էր «Արմինիա» մակագրութեամբ տախտակով մը: Անգլիոյ հոլին վրայ երրորդ անգամն էր որ կը հանդիպէինք «Հայաստան» բազրը անունին, միշտ հպարտութեամբ լեցուելով, որովհետեւ մեր մէջ կը շեշտուէր գլխակցութիւնը 50,000 սկառս-

ներու մէջ մեր երկիրը ներկայացնելու գերազոյն պարտականութեան:

Հետեւեալ օրը (30 յուլիս) ամբողջ խումբը մեծ եռանդով բանակումի աշխատութիւններով զբաղեցաւ: Շուտով երեկոն իջաւ. արեւը դեռ չանհեամ. վրանները կանգուն, խոհանոցը պատրաստ և բանակումի ձողը հաստատուած էին: Սուրբ մը հաւաքեց բոլոր տղաքը բանակումի ձողին շուրջը: «Մեր Հայրենիք»ը «պատուի սուր» զիրքով երգուած միջոցին, հաշիական եռագոյնը հանդարտօրէն կաշմին գազաթը բարձրացաւ, գրուելով իր տեղը ամէն կողմ՝ ծածանող պրօշակներու շարքին: Այս մեր ամենէն մեծ վարձատրութիւնն էր թափուած բոլոր ջանքերուն համար:

Այսպէս վերջացաւ առաջին օրը. ձգելով մեր վրայ անմուսնալի տալաւորութիւն մը:

Յաջորդ օրը տղաքն աշխատեցան դեղեկացնել և զարգարել բանակավայրը, անոր արժանավայել կերպարանք մը տալու համար: Իրապէս հաշիական բանակավայրը աշխատանքի մեծ օրինակ մը դարձաւ. հոն ամէն բան տղաքն իրենք շինած էին և ոչ թէ պատրաստ առած, և այս տեսակէտովն է որ հայ բանակետող արժանի դարձաւ բարձրատիճան պետերու դասահաման:

Ահա մեր 13-օրեայ գործունէութեան ամփոփումը:

31 յուլիս

Մինչև կէսօր բանակումի աշխատանքներ: Ժամը 1,20ին հայ ինչպէս նաև միւս խումբերը տողանցքի դաշտին վրայ իրենց յատկացուած տեղերը գրաւեցին: Առաջին տողանցքն էր որ տեղի կ'առնէր ձեմպօրիի պաշտօնական բացման առթիւ: Ժամը 2 և կէսին նորին բարձրութիւն Քըննթի դուքսը ամբիւն բարձրացաւ: «Chief scout»ը հնչեցուց բարի գալուստի ձայներգը իր հին kudu-ով (եղջերափող), որ 1907ին հաւաքեց սկառսական առաջին

փոքր խումբը Brownssea Islandի մէջ: Այդ խումբին թիւն էր 21, իսկ այսօր... 50,000: Ամերիկացիներէն և Աւստրալիացիներէն վերջ հաշիական խումբն ալ անցաւ դուքսին առջեւէն իր եռագոյնովը. այսպէս ամէն աղբ անցաւ և բոնեց իրեն յատկացուած տեղը՝ ձառեղն սկառն: Նախ խօսեցաւ դուքսը որ պատուոյ նախագահն է ամբողջ Անգլիոյ սկառսներուն:

«Ո՛վ կրնար 21 տարի առաջ երեւակայել որ այդ փոքր խումբը կարճ ժամանակամիջոցի մը՝ 22 տարուայ ընթացքին, 2,000,000 ի պիտի հասնէր, իր մէջ պա-



Colonel Halse և այլ արիւնքը լուծնակելով ամէն աղբի, ցեղի և կրօնքի տղաք, ամենքը միեւնոյն բարձր գաղափարովը ներշնչուած:

Գուքսէն վերջ խօսք առաւ «սկառս պետ»ը որ դուքսին, իր ներկայութեան համար շնորհակալ ըլլալէ վերջ, տղոց դուռնարով ըսաւ. «22 տարի առաջ երբ նոր սկառնք մեր շարժումը, ժողովուրդը մեր վրայ կը խնդար, տեսնելով մեծազլխարկ և ծնկաբաց տղաքը...»

Գլխէք որ սիկլըը միայն 50 սկառս խնդրած էինք ամէն երկիրէ, այս «փոքրիկ» բանակատեղին կազմելու համար (ճիճաղներ): աղբերէն մին պատասխանեց. «Այդ 50-ը պիտի ուղարկէնք, բաց 2000 ուրիշներ ալ միասին». և շատեր այսպէս ըրին: Արդիւնքն այն եղաւ որ այսօր 2000ի տեղ 50,000 ենք»: Անդրապառնալով անձրեւին, — Առանց ջուրի ձեմպօրի չկայ, ըսաւ: վերջին ձեմպօրիին ձեր պետը Պէշարն

Բաուլը ի տեղ Պեթրիկնկ մասքըր (լոգցող պետ) կը կոչէին: Ու է աւանակ կրնայ լաւ օղին լաւ սկառւա ըլլալ, խնդիրը գէշ օրով լաւ սկառւա ըլլալն է:

Ճաւերէն վերջ ամէն ազգ իր բանակետը վերադարձաւ սովորական աշխատանքները շարունակելու համար:

1 օգոստոս

Մէկէկէսին դարձեալ տողանցք: Ամբիտին վրայ, Պէյտըն Բաուլը կը բարեւէր անցնող զբօշակները: Տողանցքէն վերջ,

2 օգոստոս

Առաւօտեան Կալլէսի իշխանը պատեցաւ ամբողջ ճէմպօրին, և հայ բանակետի անցած մեջոցին բարեւեց մեր ետագոյնը: Յետ-միջօրէի տողանցքին, երբ հայ խումբը կ'անցնէր իշխանի և Պ. Բաուլի առջեւէն, իշխանը ծուեցաւ և Պէյտըն Բաուլին հետ սկսաւ խօսիլ: Վերջէն լսեցինք որ հետեւեալ խօսակցութիւնն ունեցած էին:

— Հեռաւոր Հայաստանէն կուգան այս



Բարիգի հայ աշխնետու խումբը

1,500 անգլիացիներ ընդհանուր հիացումի մէջ, պարեցին: Երեկոյեան, հայկական տարագրով, մասնակցեցանք բանակումի կըրակին: Մեր երգերն ու պարերը շատ լաւ ընդունելութիւն գտան: Նոյնպէս երեկոյեան դէմ ճէմպօրի հասաւ Կալլէսի իշխանը: Բոլոր ազգերու ներկայացուցչներուն հետ, հայ պետն ալ սեղմեց իշխանին ձախ ձեռքը, և լսեց որ ան գոչ է հայ խումբին ներկայութենէն:

սիրուն տղաքը:

— Ոչ, գաղթական սկառւաներ են:

— Ինչ լաւ կը բաղին. ինչ լաւ տղաք են:

Տողանցքէն վերջ Կալլէսի իշխանը խօսք առնելով բարձրացուց սկառւաական գաղափարը, շնորհակալութիւն յայտնեց սկառւա պետերու և խօսքն սկառւաներուն ուղղելով անոնց յարգութեց իրենց գաղափարի լաւ ներկայացուցիչներն ըլլալ, լաւ ընկեր-

ներ եղէք ձեր օտարազգի եղբայրներուն, և մի մոռնաք ձեր սկառւաական օրերու բարեկամութիւնները». յետոյ իշխանը բարեւեց բոլոր սկառւաները, որոնք խանդավառ ազգաղակներով պատասխանեցին, երգելով «for he's a jolly good fellow»: Գիշերը դարձեալ մերոնք մասնակցեցան բանակումի կրակին, միշտ լաւ ընդունելութիւն գտնելով:

3 օգոստոս

Այս օր խումբը երեք մասի բաժնուեցաւ. մէկ մասը մասնակցեցաւ գալլուկներու ի պատիւ տեղի ունեցող տողանցքին. միւսը գնաց զխտելու ծովալին սկառւաներուն փորձերը, իսկ երրորդ խումբը բանակավայրը մնաց, փոքրիկ ցուցադրական խանութ մը պատրաստելու և շահելու համար: Նախորդ գիշերուան մեր պարերը այնքան սիրուած էին, որ հեռաւոր բանակավայր մը մեզ հրաւիրեց նոյն պարերը կրկնելու. երեկոն շատ ուրախ անցաւ:

4 օգոստոս = այց Մանչեսթըր

Ամբողջ խումբը Մանչեսթըր հրաւիրուած էր տեղւոյն հայ գաղութին կողմէ: Կէսօրուան դէմ հասանք առեւտրական այգ մեծ քաղաքը: Նախ տեղւոյն անձանթ զինուորի դամբարանին այցելեցինք, և ծագիւտուց զրինք անոր յիշատակարանին առաջ: Յետոյ ուղղուեցանք դէպի եկեղեցի, ուր հաւաքուած էր տեղւոյն հայութիւնը, հայ խումբը տեսնելու համար: Դեւոնդ Եպս. Դուբեան իր քարոզին մէջ յիշեց սկառւաութեան կատարելիք դերը հայ ազգին մէջ և բացատրեց անոր օգտակարութիւնը. Եկեղեցիէն վերջ գաղութահայութեան կողմէ ի պատիւ հայ խումբին արուեցաւ ճաշասեզան մը, նախագահութեամբ Արբալան հօր և մասնակցութեամբ 30-ի մօտ ազգայիններու: Ճաշը անցաւ շատ զուարթ և շատ ջերմ մթնոլորտի մը մէջ: Նոյն օրն իսկ բանակետը մեկնեցանք:

5 օգոստոս

Խումբը մինչև իրիկուն բանակետը մնաց: Մանչեսթըրէն հայեր մեզի այցի գալով մինչև երեկոյ մեզ հետ մնացին:

6 օգոստոս

Հայ սկառւաներու ներկայացուցիչները մասնակցեցան կոչերու համար տեղի ունեցող համաժողովին: Խումբը մասնակցեցաւ ընդհ. տողանցքին:



Պէյտըն Բաուլ հայ բանակետի կ'այցելէ

7 օգոստոս

Բացուեցաւ սկառւաական միջազգային ընդհ. ժողովը, որուն մեր կողմէ կը մասնակցին. ընդհ. պետ Գ. Մեծատուրեան, խմբապետներ, Պ. Պայեան, Ա. Զամալեան, Հ. Դերձակեան: Խումբը կ'այցելէ Լիվըրբուլ ու կ'ընդունուի քաղաքապետութեան կողմէ:

8 օգոստոս

Խումբը կ'այցելէ Քէսթլթըթօնի քաղաքները: Ընդհ. ժողովը շարունակուելով, կ'ընտրուին Միջազգային Պիւրոյի անդամները երկու տարուան համար:

9 օգոստոս

Խումբը այցելեց Պըրքընհետ և Նիւ Պրայթըն քաղաքները, և տեղւոյն օձառի

տիպար գործարանները: Երեկոյեան, Օքս-
ֆորտի բովընները, ինչպէս ամէն ազգէ,
նոյնպէս և հայերէն մէկ հոգի ճաշի հրա-
ւիրած էին:

12 օգոստոս

Վերջին օրերնիս:
Ամէն կողմ՝ բանակաւայրերու քան-



Պեհֆօրտի նահանգապետը կ'ընդունի հայ արիւնէր

10 օգոստոս

Կէսօրին հիւրասիրեցինք երկու օքս-
ֆորտացիներ, որոնք շատ համեղ գտան հայ-
կական կերակուրները: Կէսօրուայ սուղանց-
քին, Պէյտըն Բաուըլ իր ձեռքովը մէկ մէկ
զրօշակ նուրբեց ամէն ազգի: Մեղի յանձ-
նուածը օր մը հայ սկաուտութեան փառ-
քերէն մին պիտի ըլլայ, իբր յիշատակ:

Երեկոյեան մեզի այցելեց Հիւպըրթ
Մարթինը. զինքը թէյով հիւրասիրեցինք:

11 օգոստոս

Այս օրը յատկացուեցաւ զանազան
բանակաւայրերու այցելութիւններ տալու
համար:

զում: Ըստ ժամ վերջ մեր բանակատեղիէն
ոչ մէկ հետք կը մնար: Յրուեցանք ճեմ-
պօրիկն մէջ ծանօթներէ հրաժեշտ արձե-
լու համար: Երեկոյեան մեր ներկայացու-
ցիչները մասնակցեցան Լիվրուլի մէջ
անգլիական կառավարութեան կողմէ արը-
ւած ճաշկերոյթին, որուն ներկայ էին
400 պետեր:

Առաւօտեան Աին գնացք սովից դէպի
Լիւթօն, ուր ջերմ ընդունութիւն մը կըս-
պատէր հայ խումբին:

Ճէմպօրիկի հանդէսները տասերեք օր
տևելէ յետոյ վերջ գտան օգոստոս 13ին:
Սոյն թուականը հայ սկաուտութեան տա-
րեգրութեանց մէջ անմուսնալի և մեծ տեղ
մը պիտի զբաւէ, որովհետև այս ճէմպօ-

րիկն առաջին անգամ՝ մասնակցելով իսկ
հայ խումբը ընդհանուր ուշադրութիւն գրա-
ւեց և պանծացուց հայ եւագոյնը:

Այսպէս, յաջողութեամբ սրահուեցան
Փրանսայի Հայ Ակադեմիան Միութեան
ջանքերը, շնորհիւ Միջազգային Պիւրոյի
մէջ մտնելուն:

Ինչպէս ճէմպօրիկի բոլոր ազգերը,
հայերն ալ բազմաթիւ լրագրողներու այցե-
լութիւններն ընդունեցին. այդ լրագրողները
իրենց թերթերուն մէջ արձարձեցին հայուն
կրօն գրկանքներն ու յուսախաբութիւնները
և հիացումով արձանագրեցին հայուն կրօն-

վը, բանի սր, հակառակ իր վիճակին, ան
գիտցած էր իր կորիւնները արժանաւորա-
պէս ներկայացնել ճէմպօրիկին:

Ճէմպօրիկի մէջ հայ խումբը շատ լաւ
յարաբերութիւններ ունեցաւ միւս ազգերու
խումբերուն հետ և անոնց ճանչցուց հայ
անունը:

Ճէմպօրիկի մասնակցութիւնը հայ սկա-
ուտութեան համար, հետագայ հրօրացման
և ազգային կեանքին մէջ խաղալիք դերին
կարեւոր գրաւականն է:

Հ. ԳԻՐՉԱԿԱՆ

Պ Ե Տ Ը Ե Ի Ի Ր Կ Ե Ա Ն Ք Ը



Lord BADEN-POWELL of Gilwell

Ճէմպօրիկի յաղթական
վերջաւորութեան առ-
թիւ, յիշենք անոր հիմ-
նադրին կատարած գոր-
ծը իր ժամանակագրա-
կան կարգով:

Պեալին յանձնած սերմե-
րը - հսկայ կազմիներ
գործած են ալօթր և
իր ստեղծած շարժումը
ճաւաղած է բոլոր եր-
կիրներու մէջ:

Քաղաքակիրթ բոլոր
ժողովուրդները սկաու-
տութիւնը կը նկատեն
անհրաժեշտ ուժեղ սե-
րունդի մը պատրաստու-
թեան համար և ամէն
մանկավարժ երախտա-
պարտ պէտք է զգայ
ինքզինքը Պէյտըն Բա-
ուըլի:

Այս տարեդարձին ա-
ւելիով քանի մը սուղե-
րով ամիսօրէնք Պեալին
և իր գործին պատմու-
թիւնը:

1857 ճնունդ Պ. Բաուըլի:

1876-1899, զինւորական պաշտօններ կը վարէ Անգլիոյ եւ գաղթականներուն մէջ:

1900. Պէյտըն Բաուըլ կը պաշտպանէ և կը փրկէ Մաֆաքինկ բաղաբը (Ափրիկէի մէջ):

1903 ընդհանուր բնիչ բրիտանական հեծեալօրքին: Կը ճամբորդէ Եւրոպա, Ափրիկէ, Էսպան:

1908, Scouting for Boys գիրքը կը հրատարակէ:

1909. կ'այցելէ Պրադիլլա, Արժանթին և Շիլի: Սկստուական շարժումը կը տարածէ ամէն տեղ:

1910. բանակը կը թողու եւ կ'այցելէ Միացեալ Նահանգներ և Քանադա: Կը ճամբորդէ Ռուսաստան, կ'ընդունուի Յարին կողմէ և կը կազմակերպէ ուսս սկսուածները:

1910-1914. Նոր ճամբորդութիւններ: Ամէն երկիրներու մէջ մեծ պատիւներու կ'արժանանայ:

1915. Ֆրանսական ռազմաճակատը կ'այցելէ:

1916 Գալլուկներու կազմութիւն:

1918. Կ'այցելէ Փրանսա, Սպանիա և Փորթուգալ:

1919. Լէյտի Պէյտըն Բաուըլի հետ Ամերիկա կ'այցելէ կազմակերպելու համար կրօշ կայքը:

1920. Լոնտոնի ճէմպօրին: Հիմնարկութիւն Միջազգային Գրասենեակին:

1921. Հնդկաստան կ'այցելէ, նոյնպէս Պաղեստինու Եգիպտոս:

1922. Փարիզի սկսուածական խորհրդաժողովը: Պէյճըքա կ'այցելէ:

1923. Մեծ աշխատանք եւ ճամբորդութիւններ:

1924. Քոբէնհակի ճէմպօրին:

1929. Կը ճամբորդէ Ափրիկէ եւ Եւրոպայի զանազան երկիրները: Օգոստոսին Անգլիոյ մէջ տեղի կ'ունենայ Մեծ ՊՕՐԻՆ և Պէյտըն Բաուըլ կ'ստանայ «Լորտ» տիտղոսը:

Ահա թէ ինչպէս անգլիական ազգային հերոսը իր կեանքը նուիրեց պատանիներուն:

Եւ այն ամէն սկսուածները որ ճէմպօրին մասնակցեցան պէտք է իրենց ամբողջ երախտագիտութիւնը յայտնեն Մեծ Պետին, հետեւելով անոր օրինակին եւ ըլլալով «Գոյնաւոր» ծառայելու և զոհուելու:

Նոր վարչութեան եռանդին: Նոր սկսուածներ կ'արձանագրուին ամէն օր և կը յուսանք որ աշխան անոնք ստանան իրենց վերջնական կազմը:



Վարչական գոյնակներէն սաւ մը

Բարիգ

Սկսուածներ

Բարիգի սկսուածներուն թիւը շատցած ըլլալով, կազմուած է նաև երկրորդ խումբ մը, սեպտեմբեր մէկին: Առաջին խումբին խմբապետ նշանակուած է Հրանդ Գերձակեան (արարատեան սկսուած, 5 և կէս տարի շարքերուն մէջ). երկրորդ խումբի խմբապետ նշանակուած է Արմիկ Զամարեան (5 տարի 2. մ. Արարատեան սկսուած):

Երկու խումբերն ալ իրենց առաջին բանակումը ունեցան Պիէռօլիի մէջ 1-6 սեպտեմբեր:

Գայլուկներ

Բարիգի գալլուկները իրենց մեծ բա-

նակումը ունեցան Պիէռօլիի մէջ 28 օգոստոսէն 12 սեպտեմբեր: Բանակումը շատ յաջող կարելի է նկատել. Բարիգի գալլուկներու թիւը 20ը կ'անցնի:

Մեղունք

Բարիգի մէջ կազմուած է նաև մեղունքու խմբակ մը. որ կը բաղկանայ 10-14 տարեկան աղջիկներէ, որոնք սկսուածական կրթութիւն ստանալով պլաի պատրաստուին իրր սպաղաց աղջիկ սկսուածներ:

Երեցներ

Սեպտեմբեր մէկին ընդհանուր պետը կազմած է նաև երեց սկսուածներու խումբ մը (Rovers). երեց առաջնորդի աստիճան ստացած է Յակոբ Պետիկեան (5 տա-



Բարիգի գայլուկներէն մաս մը

իր սկսուած-առաջնորդ, վկայեալ սկսուած):

Երեցներն արդէն ունեցան իրենց առանձին հաւաքութիւնները և ամէն կիրակի արշաւներ կ'ունենան:



ՄԻՈՒԹԵԱՆ

Կ Ե Ա Ն Ք Ը

Վարանս

Սկսուածներ

Վարանսի սկսուածական խումբը կը յառաջդիմէ օր ըստ օրէ՝ շնորհիւ իր խումբապետին ճիղերուն և մեծ աշխատանքին սկսուածներուն թիւը հետզհետէ կ'աւելնայ: Վարանսի խումբը 4 սղաք զրկած էր ճէմպօրին: Տղաքը կարգապահ էին և ուշիմ:

Գայլուկներ

Գայլուկները լաւ վիճակի մէջ են, և կանոնաւորապէս կը կատարեն իրենց արշաւները: Խմբապետուհի Տիգրանուհի Տուրպաք Ռօման բաղաբն երթալով հոն ալ Գայլուկներու խումբ մը կազմած է:

Մարսէլ

Մարսէլը կը կազմակերպուի շնորհիւ

ՀԱՅ ԾՆՈՂՔՆԵՐ

Կ'ուզէ՞ք — որ ձեր զաւակը չայլատերի և մնայ կորովի հայ:

Կ'ուզէ՞ք — որ ան չարքաշ և մարութ կերպով մեծնայ:

Կ'ուզէ՞ք — որ ան չփման մանէ օտար սկաւառ:

Ներսէ հեռ, նոր բարեկամներ գտնէ և մասնակցի միջազգային հաւարչութիւններու:

..... Մէկ ԽՕՄՔՈՎ

Կ'ուզէ՞ք — որ ան մեծնայ իբր սպազայ աղբասեր հայ բարբառցի մը... Սկաւառ արձանագրեցէք զայն:

Ֆրանսայի Հայ Սկաւառներու Միութիւնը՝ միակ հայկական սկաւառատան կազմակերպութիւնն է ճանչցուած Միջազգային Գրասենեակէն, որ կը ղեկավարէ 2 միլիոն սկաւառներ 42 դանազան երկիրներէ:

Մեր Միութիւնը միակն է նոյնպէս որ արտօնուած է մասնակցի միջազգային հաւարչութիւններու: Բարիկի մօտ, Պիէռ-Վիլի մէջ ունի իր ուրոյն գետիները բանակերու համար ամառ կամ ձմեռ:

Մեր Միութիւնը միակն է որ հոխանաւորուած է հայ և օտար բարձրաստիճան անձնաւորութեանց կողմէ:

Մտխը ամառը միայն 2 ֆրանք:

* * *

Սկաւառ արձանագրուելու համար ղիմել.

ԲԱՐԻՉ Է. Գերձակեանի 7, rue de Tournon (PARIS 6.)

Ա. Ջաֆարեանի 21 rue Al. Haussaire (Enghien-les-Bains.)

ՇԱՎԻԼ Լ. ՎԵՐՍՅԱՅԼ Կ.: Տէր Գալեանի 27 ave. de Bellevue Chaville (S. & O.)


Գայլուկներ Օր. Վ. Բէկզաքեան 7, rue Desnouettes (Paris)

ՎԱԼԵՆՍ ԵՒ ՌՕԴՆՆ Պ. Պալեան 6 rue Dauphine (Valence)

ՄԱՐՍԵՅԱ Ա. Մարիսուսեան (2a. Allés Marie Clémence)

Սկաւառ կրնան արձանագրուիլ 7—18 տարեկան հայ պատանիները: Արձանագրուելու համար պէտք է ունենալ ծընողքի կամ պաշտպանի գրաւոր հաւանութիւնը:

Ֆրանսայի հայ սկաւառներու
ԳՈՐԾԱԳԻՐ ԽՈՐՀՈՒՐԴ



Է. Մանուսիկեան

«ՀԱՅ ԱՐԻ» բարեկամները
«Հայ Արիի բարեկամներ» պիտի հոչակուին այն հայրենակիցները, որոնք կը սարածեն ՀԱՅ ԱՐԻ-Ն, նոր բաժանորդներ գտնելով:
ԸՆԹԵՐՑՈՂ
Պիտի չուզէի՞ք ՀԱՅ ԱՐԻ ԲԱՐԵԿԱՄ հոչակուիլ:

899





Le Gérant E. NERSES -- Imprimerie G. NERCES 65, Rue Pascal PARIS (13^e)